ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 4550

« 15 » հունիսի 2023թ.

ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները՝

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված է, որ Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված N 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի: Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող Հավելված N 1.3-ը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝
  - դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
  - դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հունիսի 16-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788